ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2013 թվականի փետրվարի 5-ին ժամը 12^{30}-ին տեղի ունեցավ Աղնջաձոր համայնքի ղեկավարի հանդիպումը համայնքի բնակչության հետ:

Ժողովի նախագահ՝ Ա. Գաբրիելյան

Քարտուղար՝ Ա. Խուդոյան

Ժողովին մասնակցում էին համայնքի ղեկավարի աշխատակազմը, համայնքի ավագանին և համայնքի 40 անդամները:

Օրակարգում

Համայնքի ղեկավարի 2012 թվականի կատարած աշխատանքների հաշվետվության և 2013 թվականի խնդիրների մասին:

Զեկուցող համայնքի ղեկավար՝ Ա. Գաբրիելյան

Զեկուցողը նշեց, որ 2012 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները:

1. Բյուջեի հաստատում, ընդունում:
2. Ողջ ձմռան ընթացքում ձյան շերտից մաքրվել են գյուղի գործող հիմնական փողոցները՝ մի քանի անգամ:
3. Գյուղի բնակչության 80-90%-ին տրամադրվել է օգնություն սննդամթերքի և հագուստի տեսքով:
4. Հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութ և ազոտական պարարտանյութ տրամադրելու նպատակով ծրագրի շրջանակներում՝ բնակչությանը բաշխվել է դիզելային վառելանյութ՝ 1370 լիտր, ազոտական պարարտանյութ 3.5 տոննա:
5. Գյուղի կենտրոնական մասում անցկացվել է փողոցային լուսավորություն:
6. Կատարվել է ծառատունկ «Արջաձոր» հանդամասի հարակից հատվածում և գյուղի ֆուտբոլի խաղահրապարակին կից տարածքում, որտեղ նախատեսվում է ստեղծել պուրակ:
7. Կատարվել է առուների մաքրման աշխատանքներ:
8. Մայիսի 9-ի՝ հաղթանակի օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառումներ: Պարգևատրվել է վետերան՝ Այվազյան Լյուդմիլա Վասիլևնան:
9. Կազմակերպվել են մշակութային և սպորտային միջոցառումներ: Մշակույթի տանը գործում է կառատեի խմբակ, որը արդեն մասնակցել է մարզային և հանրապետական մրցումների և առանձին անհատներ զբաղեցրել են պատվավոր տեղեր: Մշակույթի տան բեմի վատթար վիճակի պատճառով պարի խումբը դադարեց գործել:
10. Շրջանավարտների օրվա կապակցությամբ բոլոր շրջանավարտներին բաժանվել են նվերներ:

11. Վերանորոգվել է Արգիճի գետի վտակից վերցված ջրատարը, որը վնասվել էր սելավների պատճառով:
12. Կատարվել է կենտրոնական թաղամասի ոռոգման համակարգը սնող ակունքի պատնեշի ամրացման աշխատանքներ:
13. Վերանորոգվել է ներքևի թաղամասը սնող խմելու ջրագիծը: Արտաքին և ներքին ցանցի վրա կատարված աշխատանքները դեռևս անավարտ են, որը նախատեսում ենք ավարտին հասցնել 2013 թվականին: Ներքին ցանցի վրա տեղադրվել են երկու ցայտաղբյուրներ, որոնք ջրագծի շահագործման հետ մեկտեղ կգործեն:
14. Վերջին մի քանի տարիներին շարքից դուրս եկած «Արջաձոր» հանդամասի հանդամիջյան ճանապարհը քիչ ուշացումով վերանորոգվեց, որը հնարավորություն տվեց «Արջաձոր» հանդամասի խոտհարքները 80%-ով հնձելու: Հարկ ենք համարում նշել, որ համայնքում խոտհարքների և արոտավայրերի ռացիոնալ օգտագործումից նկատվել է համայնքում անասնագլխաքանակի բավականին մեծ աճ 2011 թվականի դրությամբ մանր եղջերավոր անասունների գլխաքանակը եղել է 296 գլուխ, իսկ 2012 թվականին 458 գլուխ; 2011 թվականին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 247 գլուխ, իսկ 2012 թվականին 369 գլուխ:
15. Կազմակերպվել է երիտասարդական հավաք, որի ժամանակ երիտասարդներին հնարավորություն ընձեռնվեց այցելել Նորավանք և Անահիտ ճամբար:
16. Գիտելիքների օրվա կապակցությամբ կատարվել է գերազանցիկների պարգևատրում:
17. Սկսվել է 17 հա խնձորենու այգիները սնող ոռոգման համակարգի կառուցումը, որը դադարեցվեց ձմռան գալու պատճառով:
18. Մշակույթի տան անմղիթար վիճակում գտնվելու պատճառով, երիտասարդների զբաղվածության հարցը լուծելու համար, երիտասարդներին տրամադրվել է խաղասենյակ, որը նաև հնարավորինս ջեռուցվում է:
19. Բյուջեի կատարում
- Հողի հարկը 101%
- Գույքահարկը 94%
- Տեղական տուրքը 101%
- Հողի վարձավճարը 92%

20. Ամանորին նվիրված կազամակերպվել է երիտասարդական երեկո:
21. Ամանորին նվիրված հանդեսի ժամանակ մինչև 15 տարեկան երեխաներին բաժանվել են նվերներ

Առաջարկեցին համայնքի ղեկավարի 2012 թվականի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Ժողովը որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանաքները գնահատել բավարար:

Խնդիրները.

Կատարված աշխատանքներին կից նաև առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են հրատապ լուծում: Դրանք են

1. էլեկտրական հոսանքի բարելավում
2. Ոռոգման համակարգերի վերանորոգում
3. Մշակույթի տան բեմի վերանորոգում
4. Գյուղի տարածքում գտնվող ջրամբարի գործարկում
5. Խմելու ջրագծի ակունքի վերանորոգում
6. Հանդամիջյան ճանապարհների ամբողջովին վերականգնում
7. Երիտասարդության զբաղվածության խնդիրների լուծում

Համայնքի ղեկավար՝ *Ա. Գաբրիելյան*

Քարտուղար՝ *Ա. Խուդոյան*